ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ԼԵՎՈՆ ԿԱՐՈՅԻ

ԻՆՔՆԱՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԴԵՐԸ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՀԱՐՄԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, խմբային գործունեություն)» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր
Սամվել Սուրենի ԽՈՒԴՈՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր
Նաիրա Ռաֆիկի ՀԱԿՈԲՅԱՆ

հոգեբանական գիտությունների թեկնածու
Գայանե Սիմոնի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թվականի սեպտեմբերի 29-ին, ժամը 12^{00}-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. օգոստոսի 29-ին:

Փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Կ.Ե. Վարդանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ժամանակակից աշխարհում ավելի ու ավելի է ամրապնդվում այն գաղափարը, որ հանցագործության դեմ պայքարում չափազանց կարևոր են հոգեբանական մեթոդները, որ ոչ թե դաժան պատիժները, այլ հոգեբանական ներգործությունը, օգնությունը կնպաստեն հանցագործի անձի դրական փոփոխություններին: Հանցագործության հոգեբանական կողմի կարևորումը մի շարք երկրներում մերժեց խնդրի «պատիժ - ուղղում» մոդելը՝ զարգացնելով հոգեվերականգնողական, հոգեշտկողական, հոգեկարգավորող աշխատանքների ռազմավարությունը: Այս տեսանկյունից կարևոր նշանակություն է ձեռք բերում քրեակատարողական հիմնարկում անձի հարմարման հիմնախնդիրը, որը ժամանակակից իրավաբանական հոգեբանության մեջ չափազանց աղոտ է հետազոտված: Մինչդեռ հենց հարմարման գործընթացում են ձևավորվում հանցավոր արարք կատարած անձի դիրքորոշումներն ու պատկերացումներն իր, իր արարքի, հանցագործության, հանցագործների վերաբերյալ, ինչն էլ որոշիչ դեր է խաղում նրա հետագա գործունեության՝ հանցագործ ուղիով գնալու կամ այդ ուղուց հրաժարվելու հարցում:

Քրեակատարողական հիմնարկությունում անձի հարմարման գործընթացում մենք կարևորել ենք դատապարտյալների ինքնավերաբերմունքը, մասնավորապես ինքնավերաբերմունքի դերը նրանց հարմարման գործընթացում, որը մինչ օրս չի ուսումնասիրվել ոչ՛ մեր երկրում և ոչ՛ էլ արտերկրում: Կարծում ենք, որ դատապարտյալների հարմարման գործընթացում ինքնավերաբերմունքի դերի, դինամիկայի ուսումնասիրությունը կնպաստի անձի դրական փոփոխություններին ուղղված հոգեբանական աշխատանքների կազմակերպմանը, կօգնի հանցավոր արարք կատարած անձին ՔԿՀ-ում հարմարման գործընթացին ցանկալի ուղղվածություն տալու, սեփական արարքի գիտակցման, դրա նկատմամբ վերաբերմունքի փոփոխության ու հանցավոր դիրքորոշումների հաղթահարման ուղիների մշակմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ: Բացահայտել ինքնավերաբերմունքի փոփոխությունները քրեակատարողական հիմնարկում դատապարտյալների առաջնային հարմարման գործընթացում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱԾԸ: Ենթադրվում է, որ դատապարտյալների հարմարման գործընթացում որոշիչ դեր է խաղում ինքնավերաբերմունքի փոփոխությունը: Դատապարտյալների առաջնային հարմարումն ընթանում է երկու տարբեր փուլերով: Առաջինը՝ **թվացյալ հարմարման** փուլն է (ընդգրկում է հիմնարկում դատապարտյալների գտնվելու մինչև մեկ ամիսն ընկած ժամանակահատվածը), որն արտահայտվում է բացասական ինքնավերաբերմունքով, ինքնամեղադրմամբ, ինքնաքննադատությամբ, ներքին կոնֆլիկտայնությամբ, և երկրորդը՝ **բուն հարմարման շրջանը** (ընդգրկում է հիմնարկությունում դատապարտյալների գտնվելու չորսից վեցերորդ ամիսները), երբ ինքնավերաբերմունքը, ստանալով դրական երանգ, արտահայտվում է սեփական անձի նկատմամբ ինքնարժևորմամբ, ինքնաընդունմամբ, ինքնավստահությամբ, ինքնագնահատականի բարձր մակարդակով:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Վերլուծել թեմային վերաբերող գրականությունը.
2. մշակել հետազոտության մեթոդաբանական և տեսական հիմքերը.
3. մշակել հիմնախնդրի հետազոտման համապատասխան մեթոդների ու մեթոդիկաների փաթեթը.

4. ուսումնասիրել ՔԿՀ-ում դատապարտյալների առաջնային հարմարման փուլերը.

5. համալիր թեստավորման միջոցով հետազոտել առաջին անգամ դատապարտվածների ինքնավերաբերմունքի, հարմարման, միայնակության սուբյեկտիվ զգացողության առանձնահատկությունները՝ ցույց տալով դրանց միջև առկա կապերը.

6. հետազոտել դատապարտյալների հարմարման գործընթացում ինքնավերաբերմունքի դերը և բովանդակային փոփոխությունները՝ հաշվի առնելով ՔԿՀ-ում դատապարտյալների հարմարման փուլերը.

7. ստացված փորձարարական տվյալների վերլուծության հիման վրա մշակել գործնական առաջարկություններ, որոնց կիրառությունը գործնականում կնպաստի ՔԿՀ-ում դատապարտյալների հարմարման գործընթացի բարելավմանը, ինչպես նաև վարչական աշխատանքների, սոցիալ-հոգեբանական բաժնի մասնագիտական-հոգեբանական գործունեության արդյունավետության բարձրացմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ: Աշխատանքում մենք հիմնվել ենք համակարգայնության, զարգացման և դետերմինիզմի մեթոդաբանական սկզբունքների վրա:

Մեր հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել հոգեբանության մեջ անձի ինքնավերաբերմունքին նվիրված Ն.Ի. Սարջվելաձեի, Ս.Ռ. Պանտելեևի, Ի.Ս. Կոնովալչուկի, Ա.Մ. Կոլիշկոյի, Ս. Կուպերսմիթի, Ջ. Հետտի, Մ. Ռոզենբերգի հետազոտությունները, անձի «Ես» - հայեցակարգի վերաբերյալ Ու. Ջեյմսի, Ռ. Բեռնսի, Կ. Ռոջերսի, Ի.Ս. Կոնի, Ե.Տ. Սոկոլովայի, Տ. Շիբուտանիի, Ռաուստե ֆոն Վրիխտի, Ա.Ա. Նալչաջյանի տեսակետները, կյանքի փոփոխվող պայմաններում հարմարման Յու.Ա. Ալեքսանդրովսկու, Ֆ.Բ. Բերեզինի, Լ. Ֆիլիպսի, Մ.Ե. Սանդոմիրսկու, Ց.Պ. Կորոլենկոյի, Ա.Ա. Նալչաջյանի հայեցակարգերը, դատապարտյալի անձի՝ Ս.Վ. Պոզնիշևի, Վ.Ն. Կուդրյավցևի, Ա.Դ. Գլոտոչկինի, Վ.Ֆ. Պիռոժկովի, Վ.Ի. Պոզդնյակովի, Յու.Մ. Անտոնյանի, Մ.Ի. Ենիկեևի, Վ.Լ. Վասիլևի, Յու.Վ. Չուֆարովսկու և ուրիշների ուսումնասիրությունները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: Հետազոտության վարկածը հաստատելու և մեր առջև դրված նպատակն ու խնդիրները լուծելու համար օգտագործվել է մեթոդիկաների հետևյալ փաթեթը.

1. ինքնավերաբերմունքի հետազոտման թեստ-հարցարան (Վ.Վ. Ստոլին),
2. Կ. Ռոջերսի և Ռ. Դայմոնդի սոցիալ-հոգեբանական ադապտացիայի ախտորոշման մեթոդիկա,
3. ինքնավերաբերմունքի ուսումնասիրման մեթոդիկա (ԻՈՒՄ, Ս.Ռ. Պանտիլեև),
4. Ա. Մակլակովի և Ս. Չերմյանինի «ադապտիվություն» բազմաշերտ անձնային հարցարան,
5. Միայնակության մակարդակի սուբյեկտիվ զգացողության ախտորոշման մեթոդ (Դ. Ռասսել, Մ. Ֆերգյուսոն):

Կիրառել ենք նաև մաթեմատիկական վիճակագրական վերլուծության մեթոդներ: Տվյալների ուղիղ կամ հակադարձ կախվածությունների դուրս բերման համար կատարել ենք կորելիացիոն վերլուծություն: Օգտվել ենք Microsoft Office Excel, և SPSS Statistics կոմպյուտերային ծրագրերից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ: Քրեակատարողական հիմնարկում առաջին անգամ դատապարտվածների հարմարման գործընթացն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ: Առաջին անգամ դատապարտվածների քրեակատարողական հիմնարկում հարմարման գործընթացում ինքնավերաբերմունքի դինամիկան է:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Գիտական հետազոտության առարկա է դարձել առաջին անգամ դատապարտվածների քրեակատարողական հիմնարկում հարմարվելու գործընթացում ինքնավերաբերմունքի փոփոխություններն ու դերը: Բացահայտվել է ինքնավերաբերմունքի բովանդակային փոփոխությունների դերը դատապարտյալների հարմարման գործընթացում: Ցույց է տրվել, որ քրեակատարողական հիմնարկությունում դատապարտյալների առաջնային հարմարումն ընթանում է երկու տարբեր փուլերով, որոնցից առաջինում ինքնավերաբերմունքը հարմարման մակարդակի հետ գտնվում է հակադարձ փոխպայմանավորվածության մեջ, իսկ երկրորդ փուլում ինքնավերաբերմունքը, կրելով որակական փոփոխություններ, հարմարման մակարդակի հետ գտնվում է ուղիղ փոխպայմանավորվածության մեջ:

Բազմակողմանի վերլուծության արդյունքում մշակվել են ինքնավերաբերմունքի բովանդակային փոփոխությունների արդյունքում դատապարտյալների հարմարման գործընթացի հետազոտության և գնահատման տեսական և կիրառական հիմքերը: Ինքնավերաբերմունքի առանձնահատկությունների տեսանկյունից վերլուծության ենք ենթարկել դատապարտյալների հոգեբանական առանձնահատկությունները: Հիմնավորվել է դատապարտյալների հարմարման գործընթացում ինքնավերաբերմունքի նշանակությունը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Կիրառական առումով ստացված արդյունքները կարող են օգտագործվել ինչպես ինքնավերաբերմունքի, այնպես էլ պենիտենցիար հոգեբանության բնագավառներում գործնական աշխատանքների ընթացքում: Մասնավորապես՝

- ստացված արդյունքները կարող են հիմք հանդիսանալ ՔԿՀ-ում դատապարտյալների հարմարման գործընթացի արդյունավետության բարձրացման աշխատանքների կազմակերպման համար,
- աշխատանքի տեսական նյութը, հետազոտության արդյունքներն ու կիրառված մեթոդները կարող են հիմք ծառայել «Ինքնավերաբերմունքի հոգեկարգավորման տրենինգ» ծրագրի մշակման համար.
- հետազոտությունը հնարավորություն է տալիս իրավաբանական հոգեբանության բնագավառում իր նախադեպը չունեցող «Դատապարտյալների ինքնավերաբերմունքը և պենիտենցիար հարմարումը» դասընթացի ծրագիր մշակել.
- հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ՔԿՀ-ներում գործող սոցիալ-հոգեբանական ծառայությունների կողմից հանցավոր արարք կատարած անձանց հետ տարվող հոգեբանական աշխատանքների ընթացքում.
- հետազոտության արդյունքները կնպաստեն ՔԿՀ-ում դատապարտյալների հարմարման գործընթացի և դրա փուլերի, ինքնավերաբերմունքի առանձնահատկությունների ախտորոշման աշխատանքներին, համապատասխան մեթոդիկաների փաթեթի մշակմանը:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ: Աշխատանքի տեսական և փորձարարական հետազոտությունների արդյունքների հիման վրա պաշտպանության ենք ներկայացնում հետևյալ դրույթները.

1. դատապարտյալների հարմարման գործընթացում, ի թիվս այլ գործոնների (քրեական ենթամշակույթ, դատվածության քանակ, ՔԿՀ-ում

գտնվելու ժամանակահատված, հանցատեսակ), կարևոր դեր ունի ինքնավերաբերմունքը.

2. ինքնավերաբերմունքը բացի ինքնաարտահայտման, ինքնահաստատման և ինքնահիրացման, ներքին կայունության պահպանման, ինքնակարգավորման, հոգեբանական պաշտպանության գործառույթներից ունի նաև հարմարողական գործառույթ.

3. դատապարտյալների թե՛ ինքնավերաբերմունքը և թե՛ հարմարումն ունի դինամիկ բնույթ: Այդ դինամիկան պետք է դիտարկել ոչ միայն ՔԿՀ-ում դատապարտյալների հարմարման վերաբերյալ ընդունված երեք փուլերի տեսանկյունից, այլև յուրաքանչյուր փուլի ներքո, քանի որ մի փուլի ընթացքում ևս կատարվում են փոփոխություններ.

4. դատապարտյալների ինքնավերաբերմունքը, փոխպայմանավորվածության մեջ գտնվելով ՔԿՀ-ում նրանց հարմարման հետ, որոշակի դինամիկա է ունենում՝ բացասականից վերածվելով դրականի:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆԸ: Հետազոտության արդյունքների հուսալիությունն ու հավաստիությունն ապահովվել են մեթոդաբանական և տեսական ադեկվատ հիմքերի ընտրությամբ և մշակմամբ, հետազոտվողների անհրաժեշտ թվաքանակով, կիրառված մեթոդների և մեթոդիկաների բազմազանությամբ և հուսալիությամբ, ինչպես նաև հետազոտության արդյունքների որակական և քանակական, այդ թվում՝ վիճակագրական վերլուծությամբ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱԲՆՈՒԹՅՈՒՆԸ: Հետազոտության արդյունքները պարբերաբար քննարկվել են ԵՊՀ սոցիալական հոգեբանության, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ զարգացման և կիրառական հոգեբանության, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի մանկավարժության և հոգեբանության ամբիոնների նիստերում, ՀՀ ԱՆ «Էրեբունի» ՔԿՀ-ում: Աշխատանքի հիմնական դրույթների մասին զեկուցվել է տեղական և միջազգային գիտաժողովներում, մասնավորապես «Հոգեբանության և իրավունքի խաչմերուկները» միջազգային գիտաժողովում, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հիմնադրման 90-ամյակին նվիրված «Նոր ուսուցիչ նոր դպրոցի համար, Մանկավարժական կրթության բարեփոխման հեռանկարներ. տեսություն և պրակտիկա» կոնֆերանսում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԸ: Հետազոտության ընտրակազմում ընդգրկվել են ՀՀ Արդարադատության նախարարության «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկության 20-30 տարեկան արական սեռի՝ ոչ ծանր և միջին ծանրության հանցանք կատարած 60 դատապարտյալներ, ովքեր դատապարտվել են առաջին անգամ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԾԱՎԱԼԸ: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից ու հավելվածից: Աշխատանքի ընդհանուր ծավալը համակարգչային շարվածքով կազմում է 149 էջ, 9 հավելված: Ինչպես նաև ներառում է 17 աղյուսակ, 9 նկար, 10 գծապատկեր: Գրականության ցանկը կազմում է 180 աղբյուրներ՝ հայերեն և օտար լեզուներով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված է նրա մշակվածության աստիճանը, ձևակերպված են

աշխատանքի նպատակները, խնդիրները, վարկածը, օբյեկտն ու առարկան, հետազոտության մեթոդաբանական հիմքերն ու մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները, հետազոտության համակազմն ու իրականացման փուլերը, աշխատանքի կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ **«Ինքնավերաբերմունք» հասկացությունը հոգեբանության մեջ»** խորագրով, բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ **«Ինքնավերաբերմունք, ինքնագնահատական, ինքնագիտակցություն, «Ես» - հայեցակարգ հասկացությունները հոգեբանության մեջ»** վերլուծության է ենթարկվում ինքնավերաբերմունքի վերաբերյալ հոգեբանական մոտեցումները: Համեմատության մեջ են դրվում ինքնագնահատական, ինքնագիտակցություն, «Ես» - հայեցակարգ հասկացությունները՝ ինքնավերաբերմունքի հետ դրանց հատման սահմանները: Վերլուծության է ենթարկվել անձի ինքնավերաբերմունքի վերաբերյալ Ն.Ի. Սարջվելաձեի, Ս.Ռ. Պանտելեևի, Ի.Ս. Կոնովալչուկի, Ա.Մ. Կոլիշկոի, Ս. Կուպերսմիթի, Ջ. Հետտիի, Մ. Ռոզենբերգի հետազոտությունները, ինքնագիտակցության վերաբերյալ՝ Վ.Վ. Ստոլինի, Ա.Բ. Օռլովի, Ի. Չեսնոկովաի, Ա. Սպիրկինի, Ե. Շորոխովաի հայեցակարգերը, ես-հայեցակարգի վերաբերյալ՝ Ու. Ջեյմսի, Ռ. Բեռնսի, Կ. Ռոջերսի, Ի.Ս. Կոնի, Ե.Տ. Սոկոլովաի, Տ. Շիբուտանիի, Ռ. ֆոն Վրիխտի, Ա.Ա. Նալչաջյանի տեսակետները:

Երկրորդ ենթագլխում՝ «**Ինքնավերաբերմունքի կառուցվածքի հոգեբանական հետազոտությունները**» խորագրով, դիտարկվում են Դ. Միդի, Ս. Կուպերսմիտի, է Ռ. Բերնսի, Կ. Ռոջերսի, Կ. Հորնիի, Ս.Ռ. Պանտիլեևի, Ե.Տ. Սոկոլովաի, Վ.Վ. Ստոլինի հայեցակարգերը: Հոգեբանության մեջ հանդիպում ենք ինքնավերաբերմունքի կառուցվածքային բաղադրիչների մի շարք դասակարգումների: Օրինակ, Ն.Ի. Սարջվելաձեն, Ա.Վ. Զախարովը և Ի.Ս. Կոնովալչուկը՝ առանձնացնում են ինքնավերաբերմունքի աֆեկտիվ և իմացական բաղադրիչները, Բ.Ս. Բրատուսը՝ արժեքային ու գործառնական կառուցվածքը, Ս. Պանտիլեևը՝ հուզական-գնահատող և հուզական-արժեքային ենթահամակարգերը:

Երրորդ ենթագլխում՝ «**Ինքնավերաբերմունքի բաղադրիչների և առանձնահատկությունների ուսումնասիրությունը դատապարտյալների մոտ**» խորագրով, դիտարկվում են ինքնավերաբերմունքի բաղադրիչներին վերաբերվող տեսական հիմքերը, դրանց դրսևորման առանձնահատկությունները դատապարտյալների մոտ: Հետազոտվող խնդրի վերաբերյալ գրականության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ սոցիալական հարաբերություններում մի շարք դժվարություններ պայմանավորված են բացասական ինքնավերաբերմունքով, մասնավորապես նույն հասարակության կողմից տրված բացասական վերաբերմունքով:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Դատապարտյալների հարմարման առանձնահատկությունները քրեակատարողական հիմնարկում»** խորագրով, բաղկացած է չորս ենթագլուխներից, որոնցից առաջինը նվիրված է **«Դատապարտյալների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները»:** Այս ենթագլխում դիտարկվում են դատապարտյալների սոցիալ-հոգեբանական բնութագրերը՝ հիմնվելով Ս.Վ. Պոզնիշևի, Վ.Ն. Կուդրյավցևի, Ա.Դ. Գլոտոչկինի, Վ.Ֆ. Պիռոժկովի, Յու.Մ. Անտոնյանի, Մ.Ի. Ենիկեևի, Վ.Լ. Վասիլևի, ուսումնասիրությունների վրա:

Հատկապես քննարկվում են այն հոգեբանական դժվարությունները, որոնք առկա են դատապարտյալների կյանքում:

Երկրորդ՝ «**Անձի հարմարումը որպես հոգեբանական ուսումնասիրության առարկա**» վերնագրով ենթագլխում անդրադարձ է արվում Յու. Ա. Ալեքսանդրովսկու, Ֆ.Բ. Բերեզինի, Լ. Ֆիլիպսի, Մ.Ե. Սանդոմիրսկու, Ց.Պ. Կորոլենկոյի, Ա.Ա. Նալչաջյանի անձի հարմարման, մասնավորապես կյանքի փոփոխվող պայմաններում հարմարման հետազոտություններին: Մասնավորապես Մ.Ե. Սանդոմիրսկին, դատապարտյալների խմբում ուսումնասիրելով պենիտենցիար սթրեսի և հոգեբանական հարմարման առանձնահատկությունները, առանձնացնում է հարմարման հետևյալ տեսակները՝ հոգեֆիզիոլոգիական հարմարում կամ օրգանիզմի ֆիզիոլոգիական ֆունկցիաների համապատասխանեցումը միջավայրին, հոգեբանական հարմարում, որը կապված է լարվածության, հոգեբանական սթրեսի հետ, հոգեսոցիալական հարմարում, կամ անձի հարմարումը սոցիալական նոր խմբին, միջանձնային հարաբերություններին ու շփմանը:

Երրորդ ենթագլխում՝ **«Քրեակատարողական հիմնարկում դատապարտյալների հարմարման գործընթացի առանձնահատ-կությունները»** վերնագրով, ներկայացվում է ՔԿՀ-ում դատապարտյալների հարմարման առանձնահատկությունները, հանդիպող խնդիրները: Անդրադարձ է արվում Մ.Ն. Գերնետի, Բ. Բեթելհեյմի, Վ. Ֆրանկլի, Վ.Ֆ. Պիրոժկովի, Վ.Մ. Պոզդնյակովի ուսումնասիրություններին, որոնք վերաբերվում են հասարակությունից անձի մեկուսացման, ՔԿՀ-ն պայմաններում հարմարման մեխանիզմներին: Մասնավորապես Վ. Ֆրանկլն առանձնացնում է բանտում դատապարտյալների հոգեբանական հարմարման երեք մակարդակներ. շոկային մակարդակ, կապված՝ ձերբակալումից մինչև բերդ հասնելու շրջանի հետ, հարմարման մակարդակ, որի ժամանակ տեղի է ունենում իրավիճակի գիտակցում, ազատման մակարդակ՝ կապված բանտից ազատման շրջանի հետ:

Չորրորդ ենթագլխում՝ **«Ինքնավերաբերմունքի, հարմարման և իրավաբանական հոգեբանության հիմնախնդիրների հետազոտությունները Հայաստանում»** վերնագրով, ներկայացվում է մեր երկրում ինքնավերաբերմունքի, հարմարման և իրավաբանական հոգեբանության բնագավառում վերջին տաս տարիների կատարված հետազոտությունները, որոնք ուսումնասիրում են ինքնավերաբերմունքի հիմնախնդիրը, դատապարտյալների, նրանց հարմարման առանձնահատկությունները:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Դատապարտյալների հարմարման գործընթացում ինքնավերաբերմունքի դերի էմպիրիկ հետազոտություն»** խորագրով, բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլուխը՝ «**Հետազոտության փուլերն ու մեթոդները**» վերնագրով, նվիրված է ՔԿՀ-ում դատապարտյալների առաջնային հարմարման գործընթացում ինքնավերաբերմունքի փոփոխությունների ստուգման նպատակով հետազոտության մեթոդների ընտրությանը, ընտրակազմին և հետազոտության կազմակերպմանը: Հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծման համար կիրառվել են հետևյալ մեթոդները՝ գրականության ուսումնասիրում և վերլուծություն, թեստավորում, վիճակագրական և տվյալների վերլուծության մեթոդներ:

Հետազոտությունն անց ենք կացրել երկու փուլով: Փորձարարական խմբում ընդգրկված են ՀՀ ԱՆ «Էրեբունի» ՔԿՀ 20-30 տարեկան, արական սեռի, ոչ ծանր և միջին ծանրության հանցանք կատարած 60 դատապարտյալներ (n=60), որոնք առաջին անգամ են դատվածություն կրում: Հոտազոտությունն

իրականացվել է 2012 թ.-ի ապրիլ-հոկտեմբեր ամիսներին: Առաջին փուլն անց է կացվել ՔԿՀ-ում դատապարտյալի գտնվելու առաջին ամսվա ընթացքում, իսկ երկրորդ փուլը՝ չորսից վեց ամիս անց (հիմք ընդունելով Մ.Ի. Ենիկեևի, Յու.Վ. Չուֆարովսկու, Վ.Ֆ. Պիրոժկովի, Ա.Դ. Գլատոչկինի՝ ՔԿՀ-ում դատապարտյալների հարմարման վերաբերյալ տեսական դրույթները):

Երկրորդ ենթագլուխը՝ «**Քրեակատարողական հիմնարկում դատապարտյալների հարմարման գործընթացում ինքնավերաբերմունքի դերի հետազոտություն»** վերնագրով, նվիրված է հետազոտության արդյունքների վերլուծությանը: Առաջին և երկրորդ փուլերով ուսումնասիրված 60 դատապարտյալների թեստավորման մեթոդի տվյալներով հնարավոր եղավ դուրս բերել հարմարման, ինքնավերաբերմունքի, միայնակության սուբյեկտիվ զգացողության վերաբերյալ մի շարք առանձնահատկություններ: Արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տվել բացահայտելու նաև որոշակի օրինաչափություններ: Հետազոտության համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջին ամիսների ընթացքում ՔԿՀ-ում դատապարտյալների և՛ հարմարումը, և՛ ինքնավերաբերմունքը շեշտակի փոփոխություններ են կրում: Հետազոտության առաջին փուլում դատապարտյալների մոտ գերակշռում են հարմարվողականության ցածր մակարդակը, սեփական անձի նկատմամբ ինքնամեղադրանքը, սեփական անձը չընդունելը, ինքնաքննադատությունը, ներքին կոնֆլիկտայնությունը, ներքին վերահսկողության և ադապտիվ ընդունակությունների ցածր մակարդակը, միայնակության սուբյեկտիվ զգացողության բարձր մակարդակը: Երկրորդ փուլում մենք հանդիպում ենք ինքնարժևորման, ինքնաընդունման, ինքնավստահության, սեփական անձի ընդունման, հարմարվողականության, ներքին վերահսկողության, ադապտիվ ընդունակությունների, ինքնակառավարման բարձր արտահայտվածության:

Երրորդ ենթագլուխը՝ «**Էմպիրիկ հետազոտության արդյունքների համեմատական վերլուծություն»** վերնագրով, նվիրված է ստացված արդյունքների համեմատական վերլուծությանը: Մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքների մշակումն ու մաթեմատիկական վիճակագրական մեթոդներով ելքային ցուցանիշների վերլուծությունը թույլ է տալիս դուրս բերել ստացված տվյալների միջև առկա կորելիացիոն կապերը:

Հետազոտության առաջին փուլում Կ. Ռոջերսի և Ռ. Դայմոնդի՝ սոցիալ-հոգեբանական ադապտացիայի ախտորոշման և Ս.Ռ. Պանտիլեևի՝ ինքնավերաբերմունքի ուսումնասիրման մեթոդիկաների միջև հակադարձ կորելիացիոն կապեր են ստացվել հարմարվողականություն, սեփական անձի ընդունում, հուզական հարմարություն, ներքին վերահսկում, գերակայության ձգտում որակների և ինքնաքննադատում, ներքին կոնֆլիկտայնություն որակների հետ: Երկրորդ փուլում ինքնավերաբերմունքի բացասական որակների և հարմարման միջև հակադարձ կորելիացիոն կապը նվազում է, ինչը մենք բացատրում ենք ինքնաքննադատության և ներքին կոնֆլիկտայնության հետ հարմարման բաղադրիչների կորելիացիոն կապերի բացակայությամբ: Դատապարտյալների ինքնավերաբերմունքն այս փուլում կրում է

բովանդակային փոփոխություններ: Եթե առաջին փուլում հարմարման հետ հակադարձ կապեր են ստացվել ինքնավերաբերմունքի բացասական որակների միջև, ապա երկրորդ փուլում պատկերն այլ է:

Ապա, դատապարտյալների ինքնավերաբերմունքի և հարմարման կապերի բացահայտման նպատակով՝ կիրառել և կորելացիոն վերլուծության ենք ենթարկել Կ. Ռոջերսի և Ռ. Դայմոնդի՝ սոցիալ-հոգեբանական ադապտացիայի ախտորոշման և Վ.Վ. Ստոլինի՝ ինքնավերաբերմունքի տեստ-հարցարան մեթոդիկաներից ստացված տվյալները: Հետազոտության առաջին փուլում ուղիղ փոխպայմանավորված կապեր են ստացվել հարմարվողականություն և գլոբալ ինքնավերաբերմունք, ուրիշների վերաբերմունքն իր նկատմամբ, ինքնակառավարում որակների միջև, սեփական անձի ընդունում և ինքնաընդունում, ինքնակառավարում որակների միջև, հուզական բարեհարմարություն և ինքնահամակրանք որակների միջև, ներքին վերահսկում և ինքնակառավարում որակների միջև, գերակայության ձգտում և ինքնակառավարում որակների միջև: Հակադարձ փոխպայմանավորված կապեր են ստացվել ինքնամեղադրում և հարմարվողականություն, սեփական անձի ընդունում, ներքին վերահսկում որակների միջև (տես՝ աղյուսակ 1–ում):

		Գլոբալ ինքնավերաբերմունք	ինքնահամակրանք	ուրիշների վերաբերմունքն իրեն	ինքնաընդունում	ինքնակառավարում	ինքնամեղադրում
հարմարվողականություն	կորելիացիա ըստ Պիրսոնի	.367**	.049	.355**	-.150	.390**	-.405**
	նշանակելիություն (2- կող	.002	.709	.004	.252	.002	.002
	N	60	60	60	60	60	60
սեփական անձի ընդուն.	կորելիացիա ըստ Պիրսոնի	.017	.298*	.078	.550**	.348**	-.392**
	նշանակելիություն (2- կող	.896	.021	.553	.000	.006	.002
	N	60	60	60	60	60	60
հուզական հարմարութ.	կորելիացիա ըստ Պիրսոնի	.159	.430**	-.012	.047	.254*	-.060
	նշանակելիություն (2- կող	.224	.002	.929	.721	.050	.647
	N	60	60	60	60	60	60
ներքին վերահսկում	կորելիացիա ըստ Պիրսոնի	-.050	-.030	.159	.091	.359**	-.415**
	նշանակելիություն (2- կող	.702	.821	.225	.490	.005	.003
	N	60	60	60	60	60	60
գերակայության ձգտում	կորելիացիա ըստ Պիրսոնի	.061	.129	-.117	.170	.397**	-.273*
	նշանակելիություն (2- կող	.646	.327	.375	.193	.002	.035
	N	60	60	60	60	60	60

Աղյուսակ 1. Կ. Ռոջերսի և Ռ. Դայմոնդի՝ սոցիալ-հոգեբանական ադապտացիայի ախտորոշման և Վ.Վ. Ստոլինի՝ տեստ-հարցարան ինքնավերաբերմունք մեթոդիկաների 1-ին փուլի կորելիացիոն կապերը

Դատապարտյալների հարմարման գործընթացում կարևոր դեր ունի հատկապես ինքնավերաբերմունքի ինքնակառավարում բաղադրիչը: Ինչ վերաբերում է հակադարձ կորելացիոն կապերին, ապա ինքնամեղադրում որակի բարձր մակարդակի դեպքում հարմարման մակարդակը ցածր է: Կատարած արարքը, մեղքի գիտակցումը, միջավայրի վերաբերմունքը, սոցիալական կարգավիճակի կորուստն իրենց ազդեցությունն են ունենում դատապարտյալի հոգեկանի վրա՝ նրա մոտ ուժեղացնելով ինքնամեղադրումը: Երկրորդ փուլի տվյալները ներկայացված են ստորև (տես՝ աղյուսակ 2–ում):

		գլոբալ ինքնավերաբերմունք	ինքնահարգանք	ինքնահամակրանք	ինքնավստահություն	ուրիշների վերաբերմունքն իրեն	ինքնաընդունում	ինքնակառավարում	ինքնամեղադրում
հարմարվողականություն	կորելիացիա ըստ Պիրսոնի	.472**	.152	.331**	.332**	.031	-.106	.122	.000
	նշանակելիություն (2- կող	.001	.245	.010	.004	.815	.419	.351	.999
	N	60	60	60	60	60	60	60	60
սեփական անձի ընդուն.	կորելիացիա ըստ Պիրսոնի	.202	.382**	.279*	.402**	.474**	.587**	.364**	-.391**
	նշանակելիություն (2- կող	.122	.003	.031	.001	.000	.000	.004	.002
	N	60	60	60	60	60	60	60	60
գերակայության ձգտում	կորելիացիա ըստ Պիրսոնի	-.054	.007	.035	.304*	.434**	.182	.083	-.283*
	նշանակելիություն (2- կող	.685	.958	.789	.018	.003	.164	.529	.029
	N	60	60	60	60	60	60	60	60

Աղյուսակ 2. Կ. Ռոջերսի և Ռ. Դայմոնդի՝ սոցիալ-հոգեբանական ադապտացիայի ախտորոշման և Վ.Վ. Ստոլինի՝ տեստ-հարցարան ինքնավերաբերմունք մեթոդիկաների 2-րդ փուլի կորելիացիոն կապերը

Ստացված տվյալներն ուժեղ փոխպայմանավորված կապեր են ցույց տալիս հարմարվողականություն և գլոբալ ինքնավերաբերմունք, ինքնահամակրանք, ինքնավստահություն որակների միջև, սեփական անձի ընդունում և ինքնահարգանք, ինքնավստահություն, ուրիշների վերաբերմունքն իրեն, ինքնաընդունում, ինքնակառավարում որակների միջև, գերակայության ձգտում և ուրիշների վերաբերմունքն իր նկատմամբ որակների միջև, և հակադարձ փոխպայմանավորված կապ է ստացվել սեփական անձի ընդունում և ինքնամեղադրում որակների միջև: Այստեղ, ի տարբերություն առաջին փուլի՝ ինքնավերաբերմունքը կրում է որակական փոփոխություններ. հարմարման և դրական ինքնավերաբերմունքի միջև առկա է ուղիղ կորելիացիա:

Հաջորդը՝ Ա. Մակլակովի, Ս. Չերմյանինի՝ «Ադապտիվություն» բազմաշերտ անձնային հարցարան և Ս.Ռ. Պանտիլեևի՝ ինքնավերաբերմունքի ուսումնասիրման մեթոդիկաների 2-րդ փուլի ելքային ցուցանիշների կորելիացիոն կապերը ներկայացնում ենք աղյուսակ 3-ում.

		ինքնակառավարում	արտացոլվող ինքնավերաբերմունք	ինքնարժևորում	ինքնաընդունում	ներքին կոնֆլիկտայնություն
ադապտիվ ընդունակություններ	կորելիացիա ըստ Պիրսոնի	-.266*	-.130	.498**	.412**	-.396**
	նշանակելիություն (2- կող	.040	.320	.000	.001	.002
	N	60	60	60	60	60
նյարդահոգեկան կայունություն	կորելիացիա ըստ Պիրսոնի	-.182	-.198	.503**	.390**	.296*
	նշանակելիություն (2- կող	.163	.129	.000	.002	.022
	N	60	60	60	60	60
հաղորդակցական առանձնահատկություն	կորելիացիա ըստ Պիրսոնի	.370**	-.456**	.397**	.396**	.115
	նշանակելիություն (2- կող	.004	.000	.000	.002	.382
	N	60	60	60	60	60

Աղյուսակ 3. Ա. Մակլակովի, Ս. Չերմյանինի՝ «Ադապտիվություն» բազմաշերտ անձնային հարցարան և Ս.Ռ. Պանտիլեևի՝ ինքնավերաբերմունքի ուսումնասիրման մեթոդիկաների 2-րդ փուլի ելքային ցուցանիշների կորելիացիոն կապերը.

Առկա կորելացիաները ցույց են տալիս, որ հարմարման գործընթացում անմիջական ազդեցություն են ունենում ինքնարժևորումը, ինքնաընդունումը, ինքնակառավարումը՝ որպես դրական ինքնավերաբերմունքի հատկանիշներ: Ինչպես նաև հակադարձ փոխպայմանավորված կապեր են գրանցվել ադապտիվ ընդունակություններ և ներքին կոնֆլիկտայնություն որակների միջև: Ստացվում է՝ ադապտիվ ընդունակությունների բարձր մակարդակի դեպքում ցածր է ներքին կոնֆլիկտայնությունը, իսկ ինքնավերաբերմունքի ինքնակառավարում, ինքնարժևորում և ինքնաընդունում որակները ուղիղ կորելացիա ունեն հարմարման հետ:

Ինչ վերաբերվում է Դ. Ռասսելի և Մ. Ֆերգյուսոնի՝ միայնակության մակարդակի սուբեկտիվ զգացողության ախտորոշիչ մեթոդիկայից ստացված տվյալներին, նշենք, որ դատապարտյալների մոտ միայնակության սուբյեկտիվ զգացողությունը հակադարձ փոխպայմանավորված կապի մեջ է եղել Կ. Ռոջերսի և Ռ. Դայմոնդի՝ սոցիալ-հոգեբանական ադապտացիայի ախտորոշման մեթոդիկաների հարմարվողականություն, ներքին վերահսկում, գերակայության

ձգտում որակների հետ. հարմարվողականության բարձր մակարդակի դեպքում առկա է միայնակության զգացողության ցածր մակարդակ և հակառակը:

Գծապատկեր 1-ում ներկայացված են 1-ին փուլում տարբեր մեթոդներով իրականացված հետազոտությունների արդյունքների կորելիացիոն կապերը:

Գծապատկեր 1.



Ինչպես երևում է գծապատկեր 1-ում ներկայացված տվյալներից, հիմնական կորելացիոն կապերի հատման կետում են գտնվում հարմարման որակներից հարմարվողականություն, սեփական անձի ընդունում, ներքին վերահսկում և ինքնավերաբերմունքի որակներից՝ ինքնակառավարում, ներքին կոնֆլիկտայնություն, ինքնամեղադրում, ինքնավստահություն որակները: Կարող ենք ասել, որ թվացյալ հարմարման փուլում հիմնական դերը կրում են ինքնավերաբերմունքի՝ ներքին կոնֆլիկտայնություն, ինքնամեղադրում, ինքնաքննադատում որակները: Հետազոտության երկրորդ փուլում ինքնակառավարում, ինքնավստահություն որակները պահպանում են իրենց դերը հարմարման գործընթացում՝ ստեղծելով ինքնավերաբերմունք-հարմարում դրական կապերը: Ասվածը հստակ երևում է գծապատկեր 2-ում:

Գծապատկեր 2.



Ինչպես տեսնում ենք գծապատկեր 2-ում հակադարձ կապերի հատման կետում են գտնվում հարմարման՝ ադապտիվ ընդունակություններ, սեփական անձի ընդունում, ներքին վերահսկում, հաղորդակցական առանձնահատկություններ որակները, և ինքնավերաբերմունքի ինքնաընդունում, ինքնարժևորում, ինքնակառավարում, ինքնավստահություն որակները: Կարող ենք ասել, որ դատապարտյալների բուն հարմարման շրջանում որոշիչ դերն են ունենում ինքնավերաբերմունքի՝ ինքնարժևորում, ինքնաընդունում, ինքնավստահություն, ինքնակառավարում որակները: Այս փուլում հանդիպում ենք ինքնավերաբերմունքի փոփոխված տեսքի, որը չկար առաջին փուլում: Ստորև՝ գծապատկեր 3-ում, ներկայացնում ենք առաջին փուլի միջմեթոդական հակադարձ կորելիացիոն կապերը:

Գծապատկեր 3.



Ինչպես տեսնում ենք, հարմարման հետ հիմնական փոխպայմանավորված կապերը ստացվել են ինքնավերաբերմունքի բացասական որակների հետ (ներքին կոնֆլիկտայնություն, ինքնամեղադրում, ինքնաքննադատում): Հիմնվելով վերոնշյալ տվյալների վրա, կարող ենք եզրակացնել, որ առաջին անգամ դատապարտվածների հարմարումը ՔԿՀ-ում ընթանում է երկու փուլով: Առաջին փուլը մենք անվանեցինք թվացյալ հարմարում, որն արտահայտված է հարմարման և սեփական անձի նկատմամբ ինքնամեղադրման, ինքնաքննադատության, ներքին կոնֆլիկտայնության որակների միջև հակադարձ փոխպայմանավորվածությամբ: Սա նշանակում է, որ քրեական ենթամշակույթը և մի շարք այլ հանգամանքներ դատապարտյալներին ներկայացնում են որոշակի պահանջներ, որոնց ենթարկվում են դատապարտյալները: Հաճախ, նրանք ստիպված են ներկայանալ այնպես, ինչպես որ պահանջում է քրեական ենթամշակույթը, բանտային միջավայրը: Արդյունքում թվում է դատապարտյալները հարմարված են: Ըստ մեզ՝ հնարավոր չէ ինքնամեղադրման, ներքին կոնֆլիկտայնության, ինքնաքննադատման հետ հարմարման հակադարձ կորելացիայի դեպքում խոսել նախնական հարմարման մասին, ինչպես որ նշում են որոշ հեղինակներ: Որպես հիմնավորում բերում ենք նաև հետազոտության առաջին փուլում ՔԿՀ-ում դատապարտյալների գտնվելու կարճ ժամանակը (մինչև մեկ ամիս), ինչպես նաև միայնակության սուբյեկտիվ զգացողության բարձր մակարդակը: Ուստի կարծում ենք, որ արդարացված է ՔԿՀ-ում դատապարտյալների գտնվելու առաջին ամիսը թվացյալ հարմարման փուլ անվանելը:

Ստորև՝ գծապատկեր 4-ում, կներկայացնենք հետազոտության երկրորդ փուլի միջմեթոդական ուղիղ փոխպայմանավորված կապերը:

Գծապատկեր 4.



Ի տարբերություն առաջին փուլի տվյալների, հետազոտության երկրորդ փուլում հարմարման հետ հիմնական փոխպայմանավորված կապերը ստացվել են ինքնավերաբերմունքի դրական որակների հետ (ինքնարժևորում, ինքնակառավարում, ինքնաընդունում, ինքնավստահություն): Ըստ այդմ՝ դատապարտյալների հարմարման գործընթացում մենք կարևորում ենք սեփական անձի ընդունում, ներքին վերահսկում և ադապտիվ ընդունակություններ որակները: Այս փուլը մենք անվանեցինք բուն հարմարման շրջան, որը բնութագրվում է սեփական անձի նկատմամբ ինքնարժևորման, ինքնակառավարման, ինքնաընդունման, ինքնավստահության դրական փոխպայմանավորվածությամբ: Այս փուլը որպես դատապարտյալների բուն հարմարման շրջան, մենք հիմնավորում ենք նաև ինքնավերաբերմունքի բարձր մակարդակով, հարմարման հետ դրա դրական բաղադրիչների ուղիղ կորելացիայով:

Հիմնվելով հետազոտության երկու փուլերի տվյալների վրա՝ մենք առանձնացրել ենք հարմարման և ինքնավերաբերմունքի այն որակները, որոնք

ձևավորել են հիմնական փոխպայմանավորված կապերը՝ ազդելով դատապարտյալների հարմարմանը կամ ապահարմարմանը ՔԿՀ-ում:



Գծապատկեր 5. Դատապարտյալների ինքնավերաբերմունքով պայմանավորված հարմարման մոդելը.

Այսպիսով, կարելի է պնդել, որ ինքնավերաբերմունքն իրականացնում է նաև հարմարողական գործառույթ: Ինչպես տեսնում ենք, հետազոտության երկու փուլերում ինքնավերաբերմունքի բովանդակային փոփոխությունների արդյունքում փոփոխություն է կրում նաև ՔԿՀ-ում դատապարտյալների հարմարումը: Կարելի է ասել, որ դատապարտյալների հարմարումը պայմանավորված է ոչ միայն ինքնավերաբերմունքով, այլ ինքնավերաբերմունքի՝ հարմարման շղթայի օղակներից մեկը լինելով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձարարական հետազոտության արդյունքներն ու տեսական վերլուծության ամփոփումը թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունները՝

1. ՔԿՀ-ում դատապարտյալների առաջնային հարմարումն ընթանում է երկու՝ մեկը մյուսից տարբեր փուլերով. առաջին փուլը մենք անվանում ենք նախնական թվացյալ հարմարման փուլ, որը, արտահայտվելով սեփական անձի նկատմամբ ինքնամեղադրմամբ, ինքնաքննադատությամբ, ներքին կոնֆլիկտայնությամբ, ընդգրկում է ազատազրկման վայրում դատապարտյալների գտնվելու առաջին ամիսը, և երկրորդը՝ բուն հարմարման շրջանը, որը, արտահայտվելով սեփական անձի ինքնարժևորմամբ, ինքնատիրապետմամբ, ինքնաընդունմամբ, ինքնավստահությամբ, ինքնագնահատականի բարձրացմամբ, ընդգրկում է ազատազրկման վայրում դատապարտյալների գտնվելու չորսից վեցերորդ ամիսները:

2. Ինքնավերաբերմունքը սեփական անձի նկատմամբ առկա դինամիկ, դրական կամ բացասական երանգ ունեցող իմացական-հուզական կառույց է, որն ուղղակիորեն կապված է միջավայրին անձի հարմարվելու գործընթացի հետ:

3. Միջավայրին անձի հարմարվելու գործընթացում ինքնավերաբերմունքը որոշակի դինամիկա է ապրում: Առաջին անգամ ՔԿՀ-ում հայտնված դատապարտվածների ինքնավերաբերմունքի մեջ տեղի են ունենում բովանդակային փոփոխություններ, ինչի արդյունքում դատապարտյալները ժամանակի ընթացքում սկսում են հարմարվել քրեակատարողական հիմնարկությանը, մասնավորապես՝ դատապարտյալների խմբին, քրեական ենթամշակույթին և առհասարակ ազատազրկման վայրերի պայմաններին ու պահանջներին:

4. ՔԿՀ-ում գտնվելու սկզբնական շրջանում առաջին անգամ դատապարտվածներին բնորոշ է անկայունությունն ու հուզական անբարեհարմարությունը, ինքնակառավարման, ներքին վերահսկողության, ինքնավստահության, ինքնաընդունման անկումը, ինքնաքննադատությունը, ինքնամեղադրումը, միայնակության զգացողությունը, ներքին կոնֆլիկտայնության բարձր մակարդակը:

5. ՔԿՀ-ում գտնվելու սկզբնական շրջանում առաջին անգամ դատապարտվածների ինքնագնահատականը ցածր է, ինքնավերաբերմունքն ունի բացասական հուզական երանգ: Դատապարտյալների խմբում որոշակի դերերի յուրացման և դիրքի հասնելու արդյունքում դատապարտյալի ինքնագնահատականն աստիճանաբար բարձրանում է, ձևավորվում է դրական ինքնավերաբերմունք:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. Սարգսյան Լ.Կ., Դատապարտյալների հոգեբանական առանձնահատկությունները, Հոգեբանության և իրավունքի խաչմերուկները, Միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2012, էջ 336-347:

2. Սարգսյան Լ.Կ., Ինքնավերաբերմունքի ուսումնասիրությունը անձի ինքնագիտակցության մակարդակում, «ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ», Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2013, էջ 54-61:

3. Սարգսյան Լ.Կ., Ինքնավերաբերմունքի կառուցվածքի խնդիրը հոգեբանության մեջ: Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հիմնադրման 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Նոր ուսուցչի նոր դպրոցի համար, Մանկավարժական կրթության բարեփոխման հեռանկարներ. տեսություն և պրակտիկա, 1-ին պրակ, Երևան, Մանկավարժ, 2013, էջ 187-190:

4. Սարգսյան Լ.Կ., Դատապարտյալների հարմարման առանձնահատկությունները քրեակատարողական հիմնարկում, «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, «Անտարես» հրատ., 12/173: Երևան, 2013, էջ 58-63:

САРГСЯН ЛЕВОН КАРОЕВИЧ

РОЛЬ САМООТНОШЕНИЯ В ПРОЦЕССЕ АДАПТАЦИИ ОСУЖДЕННЫХ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.03 "Социальная психология (межличностные отношения, семейная, групповая деятельность)"
Защита диссертации состоится 29.09.2015 г., в 12:00 на заседании специализированного совета по философии и психологии 064 ВАК РА по присвоению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна, по адресу: 0010, г. Ереван, ул.Тиграна Меца, 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования: В современном мире все больше укрепляется позиция, что в борьбе против преступности крайне важны психологические методы, что не суровые наказания, а психологическое воздействие и помощь могут способствовать положительным преобразованиям личности преступника. В ряде стран значение психологической стороны преступления ставится выше модели «наказание-исправление», интенсивно развивается система психовосстанавительных, психокорректирующих, психорегулирующих работ с заключенными. С этой точки зрения в УИУ важное значение приобретает проблема адаптации личности, которая в современной юридической психологии изучена крайне слабо. Между тем, именно в процессе тюремной адаптации формируются установки и убеждения личности относительно самого себя, собственного поступка, преступления, преступников. Эти установки и убеждения играют решающую роль в выборе преступной или неприступной жизненной позиции. На наш взгляд в процессе адаптации в УИУ важную роль играет самоотношение осужденных. На изучение именно этой проблемы направлена наше исследование. Отметим также, что данная проблема почти не изучена ни в нашей стране, ни зарубежом.

Цель исследования - выявить изменения самоотношения в уголовно-исполнительном учреждении в процессе первичной адаптации осужденных.

Гипотеза исследования. Предпологается, что в процессе адаптации осужденных важную роль играет изменение самоотношения. Процесс первичной адаптация осужденных состоит из двух этапов. На первом этапе происходит так называемая мнимая адаптация (охватывает период до одного месяца нахождения осужденных в учреждении), которая характеризуется отрицательным самоотношением, самообвинением, самокритикой, внутренней конфликтностью. На втором этапе адаптации (охватывает период от четырёх до шести месяцев нахождения осуждённых в учреждении) самоотношение получает положительный оттенок, характеризуется самопринятием, самоуверенностью, высоким уровнем самооценки.

Научная новизна и теоретическая значимость исследования: Предметом научного исследования стали такие вопросы как роль и динамика изменений самоотношения у впервые осужденных в процессе адаптации в уголовно-исполнительном учреждении. Показан, что первичная адаптация осужденных в УИУ идет двумя разными этапами. На первом этапе самоотношение и уровень адаптации находятся в обратной взаимообусловленности, а на втором этапе самоотношение качественно меняется и с уровнем адаптации имеет прямую взаимообусловленность.

В результате разностороннего исследования выявлены особенности адаптации впервые осужденных, а также роль содержательных изменений самоотношения в этом процессе. Выделены основные виды самоотношения осужденных. Обосновано значение самоотношения в процессе адаптации осужденных.

Практическая значимость исследования:

- Полученные результате могут стать основой для организации психологических работ направленных на повышения эффективности процесса адаптации осужденных в УИУ,
- теоретический материал работы, результаты исследования и использованные методы могут служить основой для тренинговой программы "Психорегулирования самоотношения",
- исследование дает возможность разработать спецкурс по теме "Самоотношение осужденных и пенитенциарная адаптация".
- результаты методики исследования могут использоваться психологическими службами действующими при УИУ для диагностических и психокорекционных работ.

В введении обоснована актуальность темы, ее научная и практическая значимость. Представлены гипотеза, цель и задачи, методологические и теретические основы, методы исследования, положения выносимые на защиту.

В первой главе под заголовком «Понятие «самоотношение» в психологии» анализируются психологические подходы относительно проблемы самоотношения.

Во второй главе под заголовком «Особенности адаптации осужденных в уголовно-исполнительном учреждении» анализируются концепции адаптации, в частности проблема адаптации осужденных в УИУ.

В третьей главе представлены эмпирические исследования роли самоотношения в процессе адаптации осужденных.

Работа завершается общими выводами и практическими рекомендациями.

Структура и обьем диссертации. Диссертационная работа изложена на 149 страницах, состоит из введения, трех глав, выводов, 180 источников на армянском и иностранных языках, а так же из приложений. В тексте диссертации представлены 17 таблиц, 9 рисунков и 10 диаграмм.

По теме диссертации опубликованы 4 статей.

SARGSYAN LEVON KARO

THE ROLE OF SELF-ATTITUDE IN THE PROCESS OF CONVICTS' ADAPTATION

Thesis submitted for the Degree of Candidate of Psychological sciences, Specialty Field: 19.00.03 "Social Psychology" (Interpersonal Relationship, Family, Group Activity) Specialization domain: Social Psychology. The official defense of the thesis will take place at Higher Attestation Commission's philosophy and psychology 064 Degree-awarding Scientific Council's session to be held on September 29, 2015 at 12.00 Armenian State Pedagogical University after Khachatur Abovian (Address: Tigran Mets, 17, Yerevan, 0010)

SUMMARY

Actuality: Nowadays the following idea is getting more and more common: while struggling against crime the psychological methods are of utmost importance; severe punishments are not so influential, the psychological influence, aid help criminal's individuality change for the better. The preference of the psychological aspect of the crime in a number of countries doesn't accept "punishment-correction" model developing the strategy of activities of psychological recovery, psychological correction and psychological regulation. From this point of view the issue of individual adaptation in penitentiary institutions acquires a particular significance and it hasn't been analyzed deeply in modern forensic psychology so far. Yet, the individual who has committed a criminal act, positions and visions of himself / herself, of his / her own deed, of crime, of criminals are being outlined in the process of adaptation proper which plays a decisive role in his further activity in the course of opting for criminal trajectory or refusing it. In the process of individual's adaptation in penitentiary institutions the convicts' self-attitude is emphasized, especially the role of self-attitude in the process of individual's adaptation in penitentiary institutions, which has been analyzed neither in our country nor abroad.

The aim of the research: To find out the changes of self-attitude in the penitentiary institutions in the process of convicts' preliminary adaptation.

Research hypothesis: The change of self-attitude is assumed to play a decisive role in the process of convicts' adaptation process. The convicts' preliminary adaptation consists of two different stages. The first one is the stage of the seemingly proceeding adaptation (covers the period of up to one month of convicts' stay in penitentiary institutions) which is marked with a negative self-attitude, self-allegation, self-criticism, inner conflicting and the second one, the adaptation process proper (covers from the fourth to the sixth months of convicts' stay in penitentiary institutions) when the self-attitude attaining some positive colouring is pointed out with a high level of self-evaluation, self-admission, self-possession, and self-assessment.

Scientific novelty and theoretical significance: The object of the research is the changes and the role of self-attitude in the course of adaptation in penitentiary institutions

which has been touched upon for the first time. It has been pointed out that the convicts' preliminary adaptation in penitentiary institutions consists of two different stages. The first stage self-attitude is in contrasting correlation with the level of adaptation, whereas in the second stage self-attitude appears in direct correlation with the level of adaptation undergoing qualitative changes.

In the result of comprehensive analysis, the theoretical and applied bases of the research and assessment of convicts' adaptation process have been developed, as an output of self-attitude changes. From the viewpoints of peculiarities of self-attitude the psychological characteristics of convicts have been analyzed. The significance of self-attitude for convicts' adaptation has been substantiated.

The practical value of the research:

- The results gained can serve as a basis managing the efficiency of convicts' adaptation process in penitentiary institutions.
- The theoretical material, as well as, the results of the research and the methods applied may be used as bases for developing a training program aimed at psychological regulation of self-attitude.
- The research enables to develop a course in "Convicts' self-attitude and penitential adaptation" which is unprecedented in the sphere of forensic psychology
- The results can be applied by the socio-psychological services in penitentiary institutions in the process of professional activities developed among people who have committed crimes,
- The results of the research will contribute to the development of respective methodological sets related to the process of adaptation in penitentiary institutions and its stages, the activities of the diagnosis of the peculiarities of self-attitude.

The introduction refers to the actuality of the topic of the thesis, its theoretical and practical significance. The aims, issues and theses are presented in this part.

Chapter one is entitled as "The concept of self-attitude in psychology" which observes the analysis of the psychological approaches towards self-attitude.

Chapter two, "The peculiarities of convicts' adaptation in penitentiary institutions", dwells on the analysis of adaptation with particular reference to the major issues of convicts' adaptation in penitentiary institutions.

Chapter three presents the empirical investigation of the role of self-attitude in the process of convicts' adaptation.

The conclusions cover the main outputs of the research.

The structure and volume of dissertation: The dissertation is submitted on 149 computer pages containing the introduction, three chapters, conclusion, reference list with 180 sources in Armenian and foreign languages, as well as appendix. The dissertation contains 17 tables, 9 pictures and 10 diagrams.

The researcher has introduced his major findings in four articles published prior to the submission of the dissertation.